ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ

0025, Երևան, Նալբանդյան 130, ընդունարան հեռ.՝ 56 80 88, քարտուղարություն հեռ.՝ 59 68 75

№ 27/60 « 22 » 01 2021 թ.

Ձեր

« ՍԻՍ» ՍՊԸ (ՀՎՀՀ 00807177)
Ք.Երևան,
Բակունցի փող 12շ. բն. 32,
էլ. հասցե՝ sis@sis.am

ԾԱՆՈՒՑՈՒՄ

Պայմանագիրը մասնակի միակողմանի լուծելու մասին

ՀՀ ոստիկանության և « ՍԻՍ» ՍՊԸ -ի միջև 16 հոկտեմբերի 2020թ.-ին կնքված թիվ ՀՀ Ո ԳՀԱՊՁԲ-ԿԱ/ՏԵԽ/2020/Հ-13-11 ծածկագրով չիրկիզվող պահարանների ձեռք բերման գնման պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) շրջանակներում « ՍԻՍ» ՍՊԸ -ն ստանձնած պարտավորությունները չի կատարել,մասնավորապես՝ չի ստորագրել և սահմանված ժամկետում չի ներկայացրել ՀՀ Ո ԳՀԱՊՁԲ-ԿԱ/ՏԵԽ/2020/Հ-13-11 ծածկագրով պայմանագրի համաձայնգիր 1-ը և չի մատակարարել 19 հատ չիրկիզվող պահարանները, որի ընդհանուր գումարը կազմում է 1 600 000 /մեկ միլիոն վեց հարյուր հազար/ ՀՀ դրամ:

Համաձայն Պայմանագրի 2.1.3-րդ կետի Պատվիրատուն իրավունք ունի միակողմանի լուծել Պայմանագիրը, եթե Մատակարարը էականորեն խախտել է Պայմանագիրը, ընդ որում Պայմանագրի նույն կետի «բ» ենթակետի համաձայն

Պայմանագիրը համարվում է էականորեն խախտված եթե ապրանքի մատակարարման ժամկետը խախտվել է:

Ելնելով վերոգրյալից և հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2017թ.-ի մայիսի 4-ի N 526-Ն որոշման N 1 հավելվածի 33-րդ կետի 16-րդ ենթակետը և Պայմանագրի 8.9-րդ կետը՝ ՀՀ ոստիկանությունը մասնակի միակողմանի լուծում է ՀՀ ոստիկանության և «ՍԻՍ» ՍՊԸ-ի միջև 16.10.2020թ.-ին կնքված թիվ ՀՀ Ո ԳՀԱՊՁԲ-ԿԱ/ՏԵԽ/2020/Հ-13-11 ծածկագրով Պայմանագիրը:

Միաժամանակ տեղեկացնում ենք, որ Պայմանագիրը կհամարվի միակողմանի լուծված՝ սույն ծանուցումը Պատվիրատուի կողմից տեղեկագրում հրապարակվելու հաջորդ օրվանից:

« ՍԻՍ» ՍՊԸ -ին «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի համաձայն գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով ընկերության տվյալները ներկայացվելու է լիազոր պետական մարմին:

Մատակարարի կողմից Պայմանագրի շրջանակում ներկայացված բանկային երաշխիքները՝ պայմանագրի ապահովում և որակավորման ապահովում, սահմանված կարգով, կներկայացվի «ԱԿԲԱ-ԿՐԵԴԻՏ ԱԳՐԻԿՈԼ ԲԱՆԿ» ՓԲ ընկերություն՝ բանկային երաշխիքներով սահմանված գումարները՝ 1 600 000 /մեկ միլիոն վեց հարյուր հազար/ ՀՀ դրամ և 160 000 /հարյուր վաթսուն հազար/ ՀՀ դրամ, ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչության N900005000758 հաշվեհամարին փոխանցելու նպատակով:

Հարգանքով՝

Պետ, ոստիկանության գնդապետ ***Ա.Ներսիսյան***